

Արմանի և վերջոյ ձուլուեցան. բայց այս ժամանակէն անշուշտ այլ եւ այլ նախարարական տոհմեր, որոնք հայ պատմութեան մէջ դեր կը խաղան. ուրիշներ ի հարկէ՝ Պարսկական եւ Պարթեւ ժամանակէ:

Այսպէս կը մտածեմ հայ ազգի կազմութեան մասին. եւ ասով կը մեկնուի թէ ինչո՞ւ Արմենիա պաշտօնական նոր յորջորջանքը Հայոց քով սովորական չեղաւ. բուն Հայք աւելի գերիշխող եղած են:

Թէ ի՞նչ էր Հայաշայէ, Մանդայէ եւն յառաջ՝ Հայաստանի մէջ, տակաւին լաւ չէ քննուած:

Հ. Յ. Տ.



ՎՐԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Շարունակութիւն):

Զ. ԳԼՈՒԽ

Սասանեան հարստութիւնը: Միւրիան քաղաքն եւ իր դաւանութիւնները (կրակապաշտ, կուպաշտ եւ ապա քրիստոնեայ): Բիւզանդացւոց յարաբերութիւնները Վրաստանի հետ: Մրցումը բիւզանդացիներին եւ պարսիկներին մէջ Վրաստանի շուրջը: Վրաստանի առաջին քրիստոնեայ քաղաքները: Վախքանից Գուրգասյան մեծ արքան եւ նրա սխրագործութիւնները: Վրաստան պարսից գերիշխանութեան տակ: Հերակլ կայսրը Վրաստանում: Արաբացիների արշաւանքը: Զուլանքը պատմագիրը:

Պարսից Սասանեան հարստութեան նախահայրը, Պերսեպոլիս Անահիտի տաճարի մի քուրմն է եղած, որի անդրանիկ որդին Արդէշիր յաջողել է վերակենդանացնել պարսկական Աքեմենեան միապետութիւնը¹: Շապուհ Ա. որին այնքան յաճախ յիշում են հայ պատմիչներն, այս Արդէշիրի որդին էր: Շապուհ անուան ձեւը հայ գրչի արդիւնք է պարսկականը իսկապէս Շահպուհ է (Chahpuhr), որից առնելով Վրաց Տարեգիրքն էլ գրում է՝ Սապոր:

¹ Clément Huart, La Perse antique et la civilisation Iranienne. Paris 1925, էջ 147:

Միւրիան, Վրաստանի Սոսորդեան — Սասանեան հարստութեան առաջին արքան, այդ Շահպուհի որդին էր: Հայ պատմագիրը նրան Միհրան է կոչում, փոխանակ Միւրիանի:

Միւրիան հաղիւ Եօքնամեայ մանուկ էր երբ Մծխէթայի դահի վրայ բազմեց, եւ մինչեւ նրա չափահաս լինելը նա դանուում էր պարսիկ Միւրվանոս իշխանի «գաւառապետութեան» այսինքն խնամակալութեան տակ:

Միւրիան զբաղաւորական էր իր հօր նման, իրբեւ պարսիկ, բայց յետոյ իր հպատակ վրացիներին հաճելի լինելու համար սկսել է նաեւ օտար կուսքերի երկրպագել. «Մնեալ եւ հասեալ յարս, ասում է Ջուանչէր, սիրեաց զՎիրս, նոցա լեզուան վարչը եւ երկրպագէր իինգ պատկերաց², առընթեր կրակարանին»: Վրացիք պահանջել էին իրենց նոր թագաւորից որ «մի հանցէ զնոսա ի կրօնից իւրեանց, զի լաւ է, ասեն, մեռանել մեզ քան ի բայ կալ յօրինաց հարցն մերոց»:

Այս Միւրիանն է, որ երրորդ անգամ փոխում է իր կրօնը, Դ. դարում, քրիստոնէութիւն ընդունելով: Միւրիանի քրիստոնէութեան յարելու պարագաները ձեւուած են Հայոց Տրդատ թագաւորի օրինակի վրայ, ինչպէս պիտի տեսնենք իր տեղում: Տարեգիրքը հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս Միւրիանի եւ հայ Տրդատի մէջ տեղի ունեցած յարաբերութիւնների վրայ: Միւրիան եւ Տրդատ, նախ քան քրիստոնեայ դառնալն ընդհարումներ են ունեցել միմիանց հետ: Միւրիան յենում էր իր պարսիկ հայրենակիցների վրայ: Բայց վերջ ի վերջոյ, յաղթութիւնը մնում է Հայոց կողմը: Սորենացին թէեւ պատմում է Տրդատի արշաւանքը իր սխակամների դէմ, բայց Միւրիանի անունը չէ տալիս: Զամչեան անձանօթ է Վրաց Տարեգիրքին, որ շատ բնական է, քանի որ իր ժամանակ սա դեռ լոյս չէր տեսել, ուստի նոյնպէս չի յիշում: Սակայն Տրդատին հպատակաւ երկիրների շարքում նա յիշատակում է Վրաստանը: Երեւի Միւրիան՝ հիւսիսային լեռնականների հետ միացած ճգնել է դուրս գալ Հայոց ազգեցութիւնից, որ առիթ է

² Վրաց Տարեգիրքն ասում է 7 պատկեր, այսինքն կուսք եւ ոչ թէ 5, որոնց անուններն էլ յիշում է, Գացայ, Գայիմ, Արմազ, Այիանա, Դայանա, Զադէն եւ Ափրոզիաէ: Վրացերէն Տարեգիրքի եւ Ջուանչէրի հայերէն թարգմանութեան մէջ եղած այս տարբերութիւնը կարող էր յառաջ գալ նրանից, որ հայերէն թարգմանութեան բնագիրն ընդօրինակող գրիչը՝ հայերէն Ե. եւ Է. տառերը (երբեւ 5 եւ 7) չփոխել է Ե. (7) ի տեղ Ե. (5) է կարգացել:

տուած Տրդատի «ընդդէմ հիւսիսականաց» արշաւանքին:

Միւրիանի ժամանակ է, որ Բիւզանդական ազգեցութիւնը մեծ քայլեր է առել Վրաստանում, մինչեւ այն աստիճան, որ Վրաց Տարեգիրքի ասելով այնուհետեւ Վրացի թագաւորները յաճախ իրենց որդիքը պատանդ են ուղարկել Բիւզանդիոն: Միւրիան իր Բակար կամ Բահար որդուն իբր թէ պատանդ է տուած եղել, եւ Կոնստանդինոս կայսրն էլ Միւրիանի նորագարձ քրիստոնէութեան վրայ վստահելով պատանդն ետ է դարձրել, ասելով՝ «Տէրն մեր լիցի երաշխաւոր ի միջի մերում, կալ քեզ մեզ հնազանդութեամբ» գրում է Ջուանչէր:

Տարեգիրքի ասելով Կոնստանդինոս այնքան է ուրախացել Միւրիանի քրիստոնեայ լինելը լսելով, որ նրան ընծայ է ուղարկել «գոտից Տեառն տախտակն եւ գրեւեռան» գրում է Ջուանչէր...

Միւրիանին յաջորդում է նրա որդին Բակար Ա. կամ Բահար (ըստ Ջուանչէրի, 324—364), որի թագաւորութեան սկիզբը զժողովրդն է ծագում Հայոց եւ Վրացիների մէջ: Արշակեան տոհմի՝ այն է Վրաստանի հայ արքայական տան յիշատակը դեռ շատ թարմ էր եւ հայերը Միւրիանի մահից օգտուելով աշխատել են նրան դահլիճէց անելով դարձեալ հայ արքայազն բազմեցնել: Բայց Բակար ընդդիմանում է եւ պարսկական զորքի օգնութեամբ մինչեւ իսկ յարձակում է Հայաստանի վրայ եւ հասնում է մինչեւ Վաղարշապատ: «Հասեալ ի դրունս Վաղարշապատու, պաշարէին» գրում է Սորենացին: Բայց Բաղարատ ասպետն եւ Վահան Ամատունին իրենց զորքով յաջողում են նրանց դուրս վանել Հայաստանի սահմանները: Այս պատերազմները նկարագրուած են թէ՛ հայ եւ թէ՛ Վրացի պատմիչների քով, բայց մեծ չփոթութիւն կայ թէ անունների եւ թէ թուականների, որի վրայ աւելորդ է կանգ առնել:

Բահարին յաջորդել է Միհրդատ (364—379), որի որդին Վարազ-Բակար (379—393) նոյնպէս իր աչքն ուղղել է դէպի Կ. Պոլիս եւ սերտ յարձերբութիւններ է պահպանել յունաց հետ, բայց այս յարաբերութիւնները զրգուել են պարսիկներին, որոնք թէ Հայաստանի եւ թէ Վրաստանի վրայ իրենց գերիշխանութիւնը աշխատում էին պահպանել ընդդէմ Բիւզանդիոնի: Պարսիկներն սկսում են արշաւանք երկու երկիրների դէմ էլ: «Յաւուրան յայնոսիկ, ասում է Ջուանչէր, եկն

գորաղուին Պարսից, մեծաւ ուժով ի սահմանս Հայոց եւ Վրաց եւ խնդրէր հարկս ի Հայոց եւ ի Վրաց...: Եւ կնամարդին այն Վարդարաք (= Վարազ-Բակար) երկուդայից եղեալ թագաւոր ի Ջորն Կուխէթոյ. եւ եկին Պարսիկք եւ շինեցին բերդ ի դրանն Տփլիսաց՝ հակառակ Մցխէթայ»: Այս բերդն է, որ յիշում է Ք. Յ. կալա (բերդ) կոչումով: Վարազ Բակար ստիպուած է լինում հպատակուել Պարսիկներին եւ խաղաղութիւն է կնքում յանձն առնելով հարկ տալ նրանց եւ Քարթլիսի անձուկ սահմաններով բաւականանալ:

Վարազ-Բակար³ ամուսնացել էր Հայոց Տրդատ թագաւորի թոռի հետ, որից ծնուել է մի «հրաշալի դուստկ», ըստ Ք. Յ. ի (Վրաց մեծ Տարեգիրքը), որ չէ դադարում նրան գովարանելուց: Այս տղան, որ Մուրվանոս է կոչում, դեռ մանուկ եղած ժամանակ կարգացել է ամբողջ Ս. Գիրքը (Ք. Յ. ասում է «բոլոր սուրբ գրեանքը») եւ մեծացել է «Աստուծոյ շնորհքի մէջ»: Նա հաղիւ 12 տարեկան էր, երբ հայրը նրան ուղարկում է պատանդ թէպոս Կրտսեր կայսեր մօտ: Մուրվանոս Կ. Պոլսում սովորում է փիլիսոփայութիւն եւ յունարէն ու ասորերէն լեզուները: Ամբողջապէս կրօնական եռանդով ոգեւորուած, նա թողնում է Կ. Պոլիսն եւ մի ներքինու հետ միասին դնում է Երուսաղէմ եւ այնտեղ կրօնաւոր է դառնում Պետրէ Մուրվանոս անունով: Քիչ յետոյ դրանով էլ չբաւականանալով, անապատ է քաշում, վանքեր է կառուցանում եւ ապա՝ աստուածային պատուէրին հետեւելով եպիսկոպոսական աստիճան է ընդունում. վերջապէս սուրբ է դառնում եւ բազմաթիւ հրաշքներ է գործում: Բակարի միւս որդիքը փոքրահասակ լինելով նրա մահից յետոյ Վրաց իշխանները թագաւոր են հռչակում Տրդատին (393—405), «գորդի գատերն Մեծին Տրդատոյ, աշխարհին Հայոց արքայի, այր լաւ եւ մեծահասաւ եւ իմաստուն, որ դադարեցոյց զգոռայն Պարսից եւ շինեաց եկեղեցիս եւ յաւելուած արար ամենայն բարեաց՝ հոգեւորաց եւ մարմնաւորաց» ասում է Ջուանչէր:

Երբ Վարազ-Բակարի որդին՝ Փարսման Դ. թագաւոր է նստում, յունաց հետ համաձայնելով մերժում է հարկ տալ Պարսից. նա միայն 3 տարի է թագաւորում (405—408):

³ «Վարազ» — նրա հայերէն վերադիր կոչումն է:



Նրանից վերջ թագաւորում է իր եղբայրն, Միհրդատ Դ., որ ոչ միայն մերժում է նոյն-պէս պարսկական հարկն, այլ Յոյներէջ էլ աշխատում է ազատուելու եւ նոյն իսկ Կղարջը որն Յոյները գրաւել էին Բակարի թագաւորութեան վերջին տարիներում, ետ է պահանջում սրանցից: Բայց այս երկու ճակատի դէմ էլ ըմբոստանալը կամ ինչպէս ասում է Ք. Յ., նրա այս «ինքնավստահութիւնը» դժբախտ հետեւանքի է հասցնում նրան: Պարսիկները յարձակում են եւ գերի են տանում նրան եւ այս գերութեան մէջ էլ նա վախճանում է: Այս հանգամանքից խրատուած, Պարսիկները՝ Վրացիներին միանգամ ընդ միշտ յունական ազգեցութիւնից հեռացնելու համար աշխատում են քրիստոնէութիւնը ջնջել Վրաստանում: Մի ժամանակ, ըստ այսմ, Վրաց եկեղեցիներում խաչի փոխարէն պարսկական «կրակն» է սկսում տիրել: Բարեբախտաբար այս վիճակն երկար չէ տեւում. Պարսիկները արտաքին թշնամիներից նեղուած, ստիպւում են Վրաստանի վրայ իրենց ճնշումը թուլացնել: Դրանից քաջալերուած վրացի իշխանները Միհրդատ Դ. ի որդուն, Արշիլին Մցխէթում թագաւոր են նստեցնում:

Արշիլ Ա. (410—434) երկրից դուրս է վանում Պարսիկներին եւ վերականգնում է քրիստոնէութիւնը: Ամբողջ Վրաստանում նորից բացւում են եկեղեցիներն եւ շատ տեղ նորերն են շինուում:

Պարսիկները նոր բանակ են ուղարկում Վրաց վրայ, բայց Արշիլ յաղթում է նրանց եւ ամէն կողմ աւետարներն է ուղարկում իր այս յաղթութիւնը ծանուցանելու համար, «ոչ զօրութեամբ մերով եւ ոչ իմաստութեամբ, այլ անուամբ Սուրբ Երրորդութեան եւ զօրութեամբ Խաչին Քրիստոսի, Աստուծոյ մերոյ յաղթեցաք Պարսից» ասում է նա, ըստ Ջուանչէրի:

Չնայելով Արշիլի այս բարեպաշտութեան, քիչ է մնում, որ կրակապաշտութիւնը նորից արծարծուի Վրաստանում: Վրաց Մուշեղ եպիսկոպոսն, որին Ք. Յ. ծագմամբ Պարսիկ է համարում, ներքնապէս մոզութիւն էր դաւանում եւ այս պատճառով ըստ Ջուանչէրի՝ «ոչ քարոզէր, ոչ յորդորէր զժողովուրդն յաստուածաշնորհութիւն, այլ զբէր գիրս ուսման աղանդոյն մոզութեան»: Ոչ Արշիլ թագաւորն եւ ոչ նրա ժառանգը տեղեկութիւն չեն ունեցել այս տարօրինակ «եպիսկոպոսի» վարմունքից:

Արշիլին յաջորդում է իր որդին Միհրդատ Ե. (434—446), որ ապրել է «հայրանման առաքելութեամբ»: Միհրդատի մահից յետոյ նրա որդին Վախթանգ (Ջուանչէրի ասելով Պարսիկները սրան կոչում էին Վարախտուրթանգ), 7 ամեայ մանուկ լինելով, նրա մայրը, Սանդուխտ, որ պարսկուհի էր, վաւրում է թագաւորութիւնը մինչեւ նրա չափահաս լինելը:

Այս Վախթանգը, Ե. դարում, Վրաց մեծագոյն արքաներից մէկն է եղած: Նրա մասին բազմաթիւ ժողովրդական աւանդութիւններ կան, որոնք նրան հերոսացնում են: Դեռ եւս 16 տարեկան՝ նա արշաւանք է սկսում Վրացիների մշտական թշնամի հիւսիսային լեռնականների՝ Օսերի (Ալանների) դէմ: Կրկնում է Գողիաթի եւ Դաւիթի դէպքը: Թշնամի բանակից Թարխան անունով մի հոկայ, որ բոլոր մենամարտութիւնների մէջ յաղթող էր հանդիսացել, կ'ելէ Վրացիների դէմ, երբ 16 տարեկան Վախթանգը «ամբողջ գիշեր Աստուծոյ աղօթելուց յետոյ», բոլոր իր մերձաւորներին խորհրդին հակառակ, ընդ առաջ է դնում Օս Գողիաթին եւ առաջին իսկ ընդհարման ժամանակ իր նիզակն այնպէս խոր է մղում Թարխանի գրահասպատ կուրծքի մէջ, որ հսկան թաւալում է գետին եւ մեռնում: Հետեւեալ օրը Օսերը մի ուրիշ հսկայ մենամարտող են հանում: Վախթանգը նստում է ձին, առնում է վահանն, որ պատած էր վագրի⁴ մորթով եւ նախ իր հակառակորդի ձին է սպանում, վերջը նաեւ հսկային: Այնուհետեւ ընդհանուր արձակումով Վախթանգը ետ է մղում լեռնականներին, եւ որպէս զի սրանք այլ եւս չկարողանան Կովկասեան կիրճից անցնելով Վրաստանն ասպատակել, այդ կիրճում կանգնում է «Օսէքի դուռը» որ մինչեւ հիմայ էլ յայտնի է Դարխան կամ աւելի ճիշդը՝ Դարխալ կոչումով, որ Պարսիկէն Դարի Ալան (Ալանների դուռ) բառն է: Երբ Վախթանգ վերադառնում է Մցխէթ, իր մայրաքաղաքը, ժողովուրդը խրախճանքի մէջ. նրա ստիքի տակ «գրախմբներ» եւ դահեկաններ է դրում (այս բառն է գործածուած Վրացերէնում):

Թողնում եմ Ք. Յ. ի չափազանցութիւնները. ըստ Վախթանգի իբր թէ իր զանազան կռիւներում Վախթանգ 760·000 գերի է վեր-

⁴ Վրացերէն բնագրի մէջ այս հայերէն բառն է գործածուած:

ցրել, ուրիշ գրչագիրներում այս թիւը հասնում է նոյն իսկ մէկ միլիոնի եւ աւելի:

Վախթանգ 22 տարեկան էր, երբ Պարսից արքայ Որմիզդէ հրաւէրով, ժողովում է իր զօրքն եւ դնում է Յունաց դէմ եղած արշաւանքին մասնակցելու եւ մտնում է Հայաստան: Այդտեղ նրան ընդ առաջ են գալիս այն նախարարներն, որոնք արեւելեան Հայաստանի բաժնուճն էին, եւ հպատակում էին Պարսից արքային, Սիւնիքի իշխանը Արեւ, Վասպուրականինը Ջուանչէր, Տարօնինը Համաղասպ եւ «Գրիգորի (Ս. Գրիգոր Լուսաւորիչ) կառուցած քաղաքի տէրը Տրդատ, որ Մեծն Տրդատի սերունդիցն էր» ասում է Ք. Յ.:

Սրանք բոլորը միացած դնում են պաշարելու Կարինը (Էրզրում), բայց չեն կարողանում առնել, «որովհետեւ երեք կարգ մեծ պարիսպ ունէր»: Վախթանգ իր բանակի մի մասը Կարինի առջեւ թողնելով, որ շարունակեն պաշարումն, ինք դնում է Պոնտոսի վրայ, միշտ Յունաց դէմ: Ճանապարհին նա աւերում է Անձիանձորը, Եկէցը (Եկեղեաց) եւ Դաստերը: Տեսնելով, որ իր Պարսիկ զանաակիցներ իրենց ձեռքն անցած քրիստոնէայ յոյն եկեղեցականներին սպանում են, Վախթանգ հրամայում է Պարսիկ եւ հայ զինուորներին, որ «Աստուծոյ պաշտաման նուիրուած անձերին» խնայեն եւ միայն գերի բռնեն: Եւ խօսքը յատկապէս Հայոց ուղղելով Վախթանգը ասում է ըստ Ք. Յ. ի. «Դուք, Հայաստանի ժողովուրդ, Արշակունիներ, բղձի Բիւրիտեան, մոտցաք պարթեւ Գրիգորին (Գրիգոր Լուսաւորիչ) . . .»: Վախթանգը շատ լաւ ծանօթ է լինում Գրիգոր Լուսաւորչի պատմութեան, որովհետեւ, ըստ Ջուանչէրի նա ասում է հայ զօրքին. «Մեծն Տրդատ թագաւորն Հայոց պատուհասեալ ի Տեսունէ վասն տանջելոյն զՍուրբ Լուսաւորիչն եւ զսուրբ տիկնայսն եւ ծանուցեալ զՔրիստոս, ոչ յաղթահարեցաւ յումեք մարդոյ»:

Այս քրիստոնէական սիրուց մղուած Վախթանգը նոյն իսկ վերջ ի վերջոյ հրաժարում է քրիստոնէայ Յոյներէ դէմ պատերազմելուց եւ երբ Պարսիկ հրամանատարը զայրանում եւ յանդիմանում է, Վախթանգը պատասխանում է Պարսիկին. «Խաչեցեալն՝ իմ Աստուածն է, նա մեզ կ'ազատէ, իսկ դուն դիմիր քո կրակի օգնութեանն եւ մինակդ կուրիք Յունաց դէմ»: Այս ասելով Վրացիք եւ Հայերը միացած թողնում, հեռանում են կուրի դաշտից,

որից օգտուելով Յոյները յարձակում են Պարսիկներէ վրայ եւ մեծ ջարդ տալիս:

Բայց այս կռիւները, գէթ այն թուակա-նին, որ Վախթանգ է նշանակել Ք. Յ. ում, յոյն պատմիչների մօտ չեն յիշուած⁵:

Հայ պատմիչ Վարդանի ասելով, Վախթանգի մայրը հայ է եղած, եւ Սահակուրիս էր կոչում⁶:

Վրաստանի այս նշանաւոր արքան Գորգասպան տիտղոսն է կրում, որ զանազան գրչագիրներում Գորգասալ եւ Գուրգասալ ձեւն է ընդունել:

Այդ տիտղոսը բացատրում է հետեւեալ կերպով: Պարսիկները յարձակում են Վրաստանի վրայ: Վախթանգը Հայոց եւ Վրաց միացեալ բանակին գլուխ կանգնելով, դիմադրում է եւ յաղթում Պարսիկներին: «Պարսիկ զինուորներին նա ջարդում էր այնպէս, ինչպէս առիւծը վայրենի էջերին» ասում է Վրացի պատմիչը: Պարսիկները երբ հեռուից տեսնում էին նրան, սարսափահար ասում էին իրար, «դո՛ւր աղ գուրգասալ», որ նշանակում է, ըստ Ք. Յ. ի, «հեռու կացէք դայլի գլխից» եւ այդ պատճառով էլ Վախթանգի վրայ մնացել է «Գորգասալան» տիտղոսը⁷:

Պարսից թագաւորը տեսնելով Վախթանգի ոյժը, լաւագոյն է համարում խաղաղութիւն կնքել նրա հետ, եւ իբրեւ հաշտութեան նշան կնութեան է առնում Վախթանգի քրոջը՝ Միհրանդուխտին: Միւս քոյրը, Ուուարանձէն էլ, ըստ Ք. Յ. ի, Սոմխէթի (Գուգարաց) բղձիլի նշանածն էր: Այդ հաշտութիւնից յետոյ Ք. Յ. դնում է Վախթանգին Պարսից արքայի կարգադրութեան տակ եւ մասնակցել է տալիս պարսկական արշաւանքներին

⁵ Բրոսէ, որ խորապէս ուսումնասիրել է Վրաց պատմութիւնը, հետեւեալ կերպով է բացատրում օտար պատմիչների այս լռութիւնը: Հաւանական է, ասում է նա, որ Վրացիք, որոնք միշտ պատրաստ են պատմել իրենց մասնակցած բոլոր ճակատամարտերը, մասնաւոր պնդիսներն, որոնց մէջ իրենց իշխանները զլխաւոր գործողներ են եղած, պահպանել են այլեւայլ մանր դէպքերի յիշատակը, չափազանցելով: Իսկ մեծ ազգերի պատմիչներն այդ միեւնոյն դէպքերն իբրեւ անկարեւոր, գանց են առել յիշատակել: Brosset, Hist. de la Géorgie, 1^{re} partie, էջ 173:

⁶ Նորերումս, Վրաստանի Ռաշա գիւղում մի փոքր եկեղեցում, սուրբի հին պատկեր է երեւան եկել: Լրագրիների ասելով նրա վրացական արձանագրութիւնը վկայում է, որ այդ պատկերն իբր թէ Գրիգոր Լուսաւորչիին է եւ նա պատկանել է Վախթանգի մօր Սահակուրիսին:

⁷ Պարսիկէնը հաւանականաբար «դուր էլ գուրգասալան» է, որի բառացի իմաստն է «հեռու» (զգոյշ) դայլ առիւծից»: Միթէր Այրիվանեցին (ԺԳ. դարում) իբր յառաջ բերած Վրացի թագաւորների ցուցակում նրան այդպէս էլ կոչում է՝ «Գուրգասալան»:



դէպի Հնդկաստան եւ «Հարէշնէրի երկիրը», ուր միշտ յաղթող է հանդիսացնում: Պարսից թագաւոր Պերոզի այս մեծ եւ երկար արշաւանքները պատմական իրողութիւններ են, թէեւ ոչ այն մանրամասնութիւններով, որով համեմատւած են Գ. Յ. ի մէջ, լուկ իբր գովասանք Վախթանգ Գորգասլանին: Այսպիսի արշաւանքներով, թագաւորների եւ հսկաների մենամարտութիւններով եւ անձնական քաջութեան դէպքերով լիքն են Վրացիների ժողովրդական վէպերը: Նոյնին պատահում ենք նաեւ հայ պատմիչների քով, նոյն իսկ այնպիսի լուրջ հեղինակների մօտ ինչպէս են Սերբոս եւ Ասողիկ, ի հարկէ անհամեմատ չափով:

Վերջապէս Տ տարի վերջը միայն Վախթանգ վերադառնում է այս հեռաւոր արշաւանքներից, մեծ փառքով եւ ամուսնանում է Բելգանդական կայսեր, Լեւոն Ա. ի աղջկան, Հեղինէի հետ: Այնուհետեւ նա նուիրւում է քրիստոնէական առաքինի կեանքին. վերահանգնում է Մծխէթի Առաքելոց տաճարը եւ մի շարք եպիսկոպոսական աթոռներ է հաստատում: Ի լրումն այս բոլորի Վախթանգ իր քրոջ Սուրբանձէի հետ ուխտի է գնում Երուսաղէմ⁸:

Պարսից հետ խաղաղութիւնն երկար չէ տեւում: Պերոզի (ըստ Գ. Յ. ի՝ Սոսրով) մահից վերջը, Վախթանգ նրա որդու հետ չէ համաձայնում եւ «ճիշդ այն ժամանակ երբ Վախթանգ արկեալ էր հինք քաղաքին Տփլիսաց եւ շինէր զնա ժրութեամբ», ինչպէս ասում է Ջուանչէր, Պարսիկները մտնում են Վրաստան: Չնայելով որ ըստ Գ. Յ. ի Պարսիկներն ասեղ բանակ ունէին, իբր թէ 740.000, իսկ Վախթանգ միայն 240.000 — որոնք անկասկած մեծապէս չափազանցած թիւեր են — Վախթանգ յաղթում է Պարսից եւ սպանում է արքայորդի Բարթամին: Սակայն այդ պատերազմը միեւնոյն ժամանակ մահարեւ է լինում քաջ արքայի համար: Պարսից բանակից ուղղուած մի նետ պատահաբար զւայնում է Վախթանգին եւ ուղղակի մտնում է նրա կուրծքը: Վախթանգ զգալով այդ տեղ իր մօտալուտ մահը, կանչում է իր որդուն եւ այլ մերձաւորներին, եւ խորհուրդ է տալիս չթողնել Յունաց հետ դաշնակցութիւնն, որով-

⁸ Վրաց արքայական ընտանիքի այս ուխտագնացութիւնը յիշուած է վրացի մետրապոլիտ Տիմոթէոս Գարայշիլու գրքում, բայց տարբեր նպատակի վերաբերում, ըստ Բրոսէի: Յամենայն դէպս Երուսաղէմի Ս. Սաչ վանքում մինչեւ հիմայ էլ կախուած է Վախթանգի պատկերն, ի յիշատակ այս այցելութեան:

հետեւ նրանք քրիստոնէայ էին: Ամբողջ Վրաստանը սուղի մէջ է մտնում երբ Վախթանգին թաղում են Մցխէթի տաճարում 499ին: Իսկ Պարսից թագաւորն իր աննկուն թշնամուց ազատուելով, անարգել արշաւում է յառաջ եւ աւերում է նորակառոյց Տփլիսը, Արմազն եւ Մցխէթը:

Գորգասլանին յաջորդում են իր որդին Դաշի (499—514), Բակուր Բ. (514—528) եւ ապա Փարսման Ե.: Այս վերջինի թագաւորութեան ժամանակ (528—542) Պարսիկները նորից յարձակուում են Վրաստանի վրայ եւ ստիպում են Փարսմանին՝ ընդունիլ Պարսից հպատակութիւնն, սակայն յանձն են առնում, որ քրիստոնէական հաւատքի վրայ բռնութիւն գործ պիտի չդրուի: Փարսման Ե. ին յաջորդում է Փարսման Զ. (542—557), իսկ սրան՝ Բակուր Գ. (557—570): Սրանք որ եւ է նշանաւոր գործ չեն կատարած:

Բակուր Գ. ի մահից վերջը, Պարսից Որմիզ արքան իր Սոսրով Աբրուէս որդին ուղարկում է Վրաց եւ Աղուանից վրայ իշխելու, բայց շուտով ետ է կանչում Յունաց զէմ արշաւելու համար: Այս հանգամանքից օգտուելով Վրացիք Յունաց կողմն են անցնում եւ նրանից են խնդրում թագաւոր իրենց համար: Մաւրիկ կայսրն էլ Վրացի Գուրամ իշխանին է նշանակում: Այստեղ Վախուշթ, ըստ Բրոսէի, իր պատմութեան մէջ մի տարօրինակ կարկանդակ է անում, այս Գուրամին ներկայացնելով իբրեւ Վրացական Բագրատունիների նախահայր. բայց այս մասին ընդարձակ պիտի խօսիմ իր տեղում:

Գուրամ՝ կիւրապաղատ կոչումն ընդունելով, մտնում է Յունաց հպատակութեան ասկ (575—600): Այդ ժամանակից, իսկապէս 596ից սկսած, քաղաւոր տիրոջը դադարում է եւ այնուհետեւ Վրաստանի վրայ իշխողները կոչում են էրիսթավների մթավար (իշխանների զուլու): Այս իշխանները երկու մեծ փորձանքի մէջ էին ինկած՝ մի կողմից պարսկական սպառնալիքը, միւս կողմից բելգանդականը եւ տարուբերում էին դրանց մէջ, մերթ մէկի, եւ մերթ միւսի կողմ յարելով: Բայց որովհետեւ Տփլիսը Վրաստանի մայրաքաղաքը, շատ աւելի մօտ էր Պարսկաստանին քան Կ. Պոլսին, ուստի վերջ ի վերջոյ կչոէ նժարը թեքուց Պարսիկների կողմը եւ Վրացիք խոհեմութիւն համարեցին Պարսից յարել:

Այս բանից զայրացած՝ Հերակլ կայսրը

արշաւում է Վրաստանի վրայ եւ գրաւում է Թիֆլիսը⁹: Գուրամի յաջորդը՝ Ստեփանոս (600—619) սպանում է այս ճակատամարտում: Հերակլ՝ Ստեփանոսի տեղ մթափար է դնում Աղառնասէ Ա. ին (Ատրնէրսէ՝ ըստ Ջուանչէրի), Սոսրովեան տոհմից, որ իշխում է 20 տարի (619—639): Սրան օգնական է եղել ոմն Ջիրզա կամ Ջիրբուզ, որին Մովսէս Կաղականտուացի յիշում է՝ Ջիրբուզախան անունով:

Աղառնասէի մահից յետոյ նրա տեղը նստում է իր որդին Ստեփանոս, նոյն Սոսրովեան տոհմից (639—663): Սրա ժամանակ է, որ սկսում է Արաբացիների արշաւանքը դէպի Հայաստան եւ այնտեղից Վրաստան: Գ. Յ. ի պատմելովը, Վրաստան է մտնում Մրուան զօրապետը՝ «Մահմէդի քրոջ եւ Աբդուլէլիքի որդին», որ Սուլ էր կոչւում, ասում է Վրացի պատմաբանը, ոչ թէ իր բնական խլութեան պատճառով, այլ որովհետեւ «իւր խորհրդականների խօսքը չէր լսում»: Արաբացիք, ըստ Գ. Յ. ի, քանդելով, աւերելով յառաջանում են մինչեւ Կովկասի լեռները, մինչեւ Դարբալի կիրճը: Ստեփանոս թագաւորի որդիքը Արչիլ եւ Միհր իրենց զանձը զանազան տեղեր թաղցնելով փախչում են Եգրիս եւ այնտեղից էլ Ափխազիա եւ ամբարնում են մի բերդի մէջ: Սակայն, շարունակում է Ջուանչէր, նրանք մտածում են. «եթէ աստ մնամք՝ առնուն զամուրն եւ յիշատակ ոչ թողուն մեզ եւ զանձս զոր ժողովեցին քրիստոսապասկն Միհրան եւ յԱստուծոյ իմաստնալից Վախթանգ՝ կորնչին անդամներէք. եւ զայն եւս զոր Հերակլ աստէն եթող, զորոց զգիրն եղաք ընդ երկուց թաղաց զմբխտեաց»: Ուստի արքայորդիներն Աստուծոյ օգնութեան ապաւինելով դուրս են գալիս բերդից եւ յարձակուում են ասպատակող Արաբացիների վրայ: Բարբախտաբար ճիշդ այս միջոցին բնութիւնն է նրանց օգնու-

⁹ Հերակլ կայսրի այս արշաւանքը դէպի Վրաստան եւ Պարսկաստան, շատ ծանօթ է: Նրա բուն նպատակը Գրիստոսի խաչը գտնելն էր, որը Պարսիկներն Երուսաղէմը գրաւելուց յետոյ իրենց հետ Պարսկաստան էին տարել: Ըստ Ջուանչէրի, Հերակլ՝ «թագաւորեալ ի վերայ Յունաց եւ ամեալ զօր յարեւմտից ի թուրքաց բազում յոյժ, էլ ի ինդիք կենսատու խաչին ճանապարհ կալեալ ընդ Հայս, եկն ի Բզնունիս եւ անտի կանէ ի Տփլիս»: Նա հասնում է իր նպատակին: Պարսից արքան պարտուելով «արաբալ սէր ընդ կայսեր, ետ ի նա զնաչն Տեան»: Բայց Հերակլ՝ Պարսկաստանից դառնում է Մցխէթ եւ այնտեղ էլ ուրիշ «սրբութիւն» է գրաւում, այն «զոտից Տեանն տառակն եւ զրեւոսն, զուրեայն ի Կոստանդիանոսէ Միհրանայ (Միլիան) թագաւորին եւ տարաւ ընդ իւր, ոչ լսելով աղերսանացն Ատրնէրսէի եւ ամենայն Վրաց աշխարհին արտասուացն» պատմում է Ջուանչէր:

թեան է հասնում. յորդ անձրեւներից գետերը վարարում են. «Եւ յանկարծակի յարեալ գետն ի սաստիկ հեղեղաց, եւ տարաւ ի դօրացն Հարաչեաց (սեւամորթների), որք կային ընդ նոսա՝ քան եւ երեք հազար այր եւ միս երեսուն եւ հինգ հազար... (իսկ Վրացիներից սպանուած են միայն վաքսուն հոգի), եւ յայնմանէ կոչեցաւ գետն պատահամբ Ձխէնիս ծղալի (որ Վրացերէն նշանակում է միւս ջուր կամ գետ, եւ հիմայ էլ այդ գետն այդպէս է կոչւում) եւ միւսն Հարաչիս ծղալի («Հարէշնէրի՝ սեւամորթների ջուր, գետ»)»:

Դժբախտաբար՝ այս յաղթութիւնը աղետաբեր է լինում ժողովրդին: Այնուհետեւ Սարակինոսներն աւերում են ամբողջ երկիրը. «ոչ ոք կարէ զաղէտս քրիստոնէից ընդ զբողարկանել» ողորում է այս հայ գրողը (Ջուանչէրի թարգմանիչը), որ իր ազգակից հայ պատմադիրների նման աղէտը վերագրում է քրիստոնէից մեղքերի մեծութեան՝ «ի ընդ մեղացն չափոյ քրիստոնէից՝ Յունաց եւ Հայոց, Ասորոց եւ Աղուանից եւ Վրաց»:

Արչիլ թագաւորը (668—718) արաբացի Ասիմ զօրապետի գթութիւնը հայցելու համար գնում է նրա մօտ, որին Ջուանչէր նաեւ «ճիճնամ որդի Մահազիայ» է կոչում, բայց սա առաջարկում է նրան, որ մահմետական դառնայ եւ երբ մերժում է, Արաբացին նրան չղթայակալ է անում եւ ասում. «Յոյց ինձ զդանձն կայսեր (Հերակլ) եւ զնախնեացն քոց, եւ զարձիր ի կրօնս իմ, եւ զքոյն քեզ շնորհեցից եւ կալ զիշխանութիւն քո եւ արարից զքեզ սպասաւար ամենայն Քարթլայ»: Արչիլ ոչ գանձի տեղն է ցոյց տալիս եւ ոչ էլ իր հաւատքն ուրանում եւ բռնաւորն սպանել է տալիս նրան: Գիշերը քրիստոնէաները գալիս գողանում են վկայի մարմինն եւ տանում թաղում են Նուակարայի՝ իր շինած եկեղեցում:

Այսպիսի վախճան ունեցաւ Խոսրովեան կարստութեան վերջին քաղաւորը: Արչիլ թողնում է երկու որդի Ջուանբեր եւ Իվանէ եւ 4 աղջիկ՝ Գորանդուխտ, Մարիամ, Միհրանդուխտ եւ Ծուչան: Ահա այս Ջուանբերն է, որին զրջազիրները Ջուանչէր էլ են կոչում, որ գրել է իր ծանօթ Վրաց Պատմութիւնը եւ որի հին հայերէն թարգմանութեան ձեռագիրը սուրում է վենետիկում «յանուն Ջուանչէրի պատմիչ» վերնագրով:

Սոսրովեան (Սասանեան) հարստութեան անկումով վերջանում է Վրաստանի քաղաքական կեանքի առաջին շուրջ 1000ամեայ

ըրջանը: Այս առաջին շրջանում ինչպէս տեսանք Վրաց թագաւորութիւնը փոքր ի շատէ աչքի ընկնող դեր է խաղացած միայն Փանաւազ Ա.ի (Գ. դար Ն. Ք.) եւ Վախթանգ Գորգասլան թագաւորի (Յ. դար Յ. Ք.) ժամանակ, այլապէս միշտ թոյլ է եղած եւ երկարատեւ նաեւ Հայաստանի քաղաքական ազդեցութեան բարոյական կողմը նմանապէս զգալի է եղած, մասնաւոր Յ. Ք. առաջին դարերում, քրիստոնէութեան մուտքի եւ Վրացական այբուբենի գիտութիւնը միջոցներով: Այս հայկական ազդեցութիւնը տարածուած է Վրաստանի վրայ «Վերահայք» կոչուած նահանգի եւ մասնաւորապէս Տայք եւ Կղարջք գաւառների ճանապարհով, որոնք շատ մեծ դեր են խաղացել ընդհանուր Վրաստանի մշակոյթի վրայ:

Այս բոլոր մանրամասն պիտի պատմուի յետագայ Գլուխներում:

(Շարունակելի է) ՍԱՐՈՒՆԱՆ



ՅՈՎՀԵՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ ԵՍՏՅԵՆԵ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

1. Յովհաննէս Ոսկերբանի «նշանաւորագոյն» գրուածքներէն մէկն է Եսայեայ մեկնութիւնը, կը գրէ Montfaucon, թէ՛ ոճի գեղեցկութեան, թէ՛ խօսողին հանճարի բարձրութեան եւ թէ բարոյալից վարդապետութեան տեսակէտով: Իսկ Tillemont կը տեսնէ հոն արտակարգ պերճարանութեան մը յայտարար գծերը:

Այս կարեւոր գրուածքը յունարէն սկզբնագրի մէջ թերակատար է հասած է Եսայեայ Ա.—Է. գլուխներու եւ Ը. գլխոյն առաջին 10 համարներու Մեկնութիւնը միայն. հրատարակուած Montfauconէ Ոսկերբանի Համօրէն Գործոց 2. հատորին մէջ, Պարիս 1724, էջ 1—93. ասկէ արտատպուած՝ Migne, Patrologia graeca, հատոր 56, էջ 11—94:

Որովհետեւ յոյն մատենագրութեան մէջ կը պահուի որ եւ է հետք, որ ցոյց տար թէ գոյութիւն ունեցած է Ը. 10 համարին շարունակութիւնը, կ'իշխէ հայրագէտներու

մէջ այն համոզումը, թէ Ոսկերբան Ա.—Ը. 10 գլուխները միայն մեկնած է: Արդեամբք ալ, երբ երեւան եկաւ Մեկնութեան հայերէն թարգմանութիւնը, ճիշտ Ը. 10ին վերջը, ուր կ'ընդհատէր յունարէնը, տեսնուեցաւ ուշագրաւ գիտողութիւնս թէ «Մինչեւ ցայս վայր գտաւ(ք) իւրով ձեռովք գրեալ երանելոյն Յովհաննու յունարէն» (էջ 102):

Tillemont յայտնած էր կարծիքը, թէ Ոսկերբան սարկաւազութեան օրերուն սկսած ըլլայ գրել Մեկնութիւնս. եւ յետոյ ուրիշ գրադումներու պատճառաւ արգելուած:

Կարծիքս իրաւամբ անտեղի կը գտնէ Baur¹, վասն զի ծանօթ են մեզի գրուածքներ, նոյնպէս մեկնողական, զորոնք Ոսկերբան իւր քահանայութեան եւ հայրապետութեան օրերուն գրած է: Աւելի հաւանական է կարծել, թէ Ոսկերբան հիւանդութեան մը պատճառաւ ընդհատած ըլլայ քարոզներու այս շարքը: «Ըստ տիրող կարծեաց, կը գրէ Bardenhewer², այս մեկնութիւնը խմբագրէ մը գործն է, որ Ոսկերբանի ճառերը իրենց ճարտասանական նկարագրէն մերկացնելով վերածած է կանոնաւոր Մեկնութեան մը»: Իսկ Ը. 10ի յաջորդող մասերու համար, որոնք կը գտնուին հայերէն թարգմանութեան մէջ, կը գրէ թէ «կը կարօտին դեռ քննութեան եւ հաւատարման»³:

Բայց կրնանք վստահարար ըսել թէ Ա.—Ը. 10 գլուխներու Մեկնութիւնը արդէն Յ. դարու առաջին կէսին ծանօթ էր հրատարակին իրրեւ ինքնագրութիւն Ոսկերբանի, «իւրով ձեռք գրեալ... յունարէն»: Իսկ Ը. 11—ԾԳ. գլուխներու Մեկնութիւնը յօրինած է հաւանօրէն Ոսկերբանի աշակերտներէն մին, ոչ զոյգն հմտութեամբ, թերեւս «ի բանից» Ոսկերբանին, բայց ոչ անոր «ձեռք» գրուած:

2. Հայերէն թարգմանութեան մասին արդէն 1862ին կը յայտարարէին Վենետիկի Մխիթարեանք Պաւղոսի թղթոց մեկնութեան Ա. հատորի Յառաջարանին մէջ (էջ Է), թէ «գիտացէ հայրենասէրն, զի ի թերակատար մատենից նորին սրբոյ վարդապետին՝ կան եւ մեկնութիւնքն Եսայեայ եւ Եղեկիէլի Բերի յոյժ եւ Երկոճեան, զորս անթերի օրինակաց ակնկալեալ՝ թողումք առ ժամս»:

¹ P. Ch. Baur, Johannes Chrysostomus und seine Zeit. Bd. I. München 1923, էջ 237:
² Geschichte der altkirchlichen Literatur. Bd. II. Freiburg 1922, էջ 336:
³ Անդ, էջ 337:

Այս պահաաւոր օրինակն էր Վենետիկի Մխիթարեանք այն ձեռագիրը, որուն համար կ'ըսուի անտիպ ցուցակի մը մէջ, թէ է գրչութեամբ «բոլորգիր, թերի սկիզբն, մէջն եւ կատարածն»: Աւելի մանրամասնօրէն նկարագրած է Հ. Ա. Տիրոյեան. «եղանակ գրութեանն՝ որ է միջին անուանեալ երկաթագիր, եւ արտաքին երեւոյթ մատենին՝ յօրինեալ ի բամբակեայ թղթոյ՝ տան մեղ գուշակել յիժ. դարու գաղափարեալ լինելոյ»⁴: Կը պակսին Ա.—Բ. 1, ԻԱ. 2—Լ. 5, ԿԳ. 8—ԿԶ. 24 գլուխներու Մեկնութիւնք, չյիշելով ինչ ինչ տեղիքներու կրած վնասները:

Այս օրինակի վրայէն ծագած է Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի Թ. 223, գրուած իբր 1840ին Վենետիկի Մխիթարեան Հարց ձեռքով⁵:

Ուրիշ օրինակ մը կը յիշուէր ի Կալիպթա անհատի մը ջով. որուն մասին կը հաղորդագրէր Ա. ր շ ա լ ը յ ս Ա. ր ա ր ա տ ե ա ն, 1868ին (Թ. 845). «Մեկնութիւն Եսայեայ մարգարէի, բամբակաթուղթ, խոշորագիր, արարեալ յՈսկերբանէ (փոքր ինչ պակասեալ յԱ. գլխոյ): Օրինակ սորին՝ գրչաւ հանգուցեալ Իսահակայ վարդապետի, երբեմնական ժողովարարին Հնդկաստանի՝ գտանի ի Ս. Աթոն Երուսաղէմի: Երանի՛ թէ ի լոյս ընծայիւր»: Առ այս կ'ակնարկէ անշուշտ եւ Հ. Ա. Տիրոյեան երբ կը գրէ իւր Յառաջարանին մէջ. «լուեալ իսկ է մեր եթէ գտանին առ ոմանս յազգայնոց ի պակասեալ կոտորակաց օրինակիս մերոյ. այլ քանզի ցարդ չեղեն մեզ գէպք ի ձեռս բերելոյ զնոսին, վասն որոյ լաւ վարկանիմք ընծայել (զոր ունիմքն)... հանդերձ թերութեամբք» (էջ Ե):

Այս օրինակն է որ, ինչպէս կը ծանուցանէ Սիրոն, 1839ին ձեռք բերած է ի Նոր Զուլայ Տէր Յովհաննէս Սաչիկեան քահանայ, «Վալիպայի երբեմնի հանրածանօթ աւագերէցը»⁶: Եւ անկէ օրինակ հանած է Իսահակ Վ. Գաղատացի⁷ եւ ուղարկած Երուսաղէմ:

⁴ Յառաջարան Մեկնութեան Եսայեայ, էջ 9:
⁵ Յ. Յ. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Վիեննայի Մխիթարեան Մատենադարանի, էջ 571:
⁶ Յովհաննէս քահանայ Սաչիկեան (1829—1897) սարած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի հետ տեսական յարաբերութեան մէջ. նուիրած է նաեւ այլ եւ այլ իրեր, ինչպէս կ'երեւայ անոնց թուին մէջ եղած է նաեւ ձեռագիրս: Հմմտ. իր մասին՝ Մ. Եպ. Աղաւնուհի, Միարանք եւ այցելուք հայ Երուսաղէմի: Երուսաղէմ, 1929, էջ 385—386:
⁷ Սահակ Վ. Տէր-Գրիգորեան Գաղատացի († 1847) իրրեւ նուիրակ կ'երթայ Հնդկաստան 1842ին եւ կը վերադառնայ 1844ին. հմմտ. Աղաւնուհի, անդ, էջ 442—444:

սաղէմ, ուստի 1847էն յառաջ: Ինչպէս այժմ Սիրոնէն կը տեղեկանանք յետ ժամանակաց իսկական ձեռագիրն ալ հասած է Երուսաղէմ, 1880էն, այս ինքն Վենետիկի հրատարակութեան էտքը, վասն զի նոյն Սաչիկեան քահանայ կըրցած է ձեռագրին մէջ թղ. 23ր ծանօթագրել թէ «Վենետիկի տղագրութիւնն աստէն սկսանի» (Սիրոն, էջ 331):

Երուսաղէմեան հատակոտորներու նկարագրութիւնը այսպէս կու տայ Սիրոն. «Գրուած է թանձր բամբակեայ թուղթի վրայ, դէպի բոլորգիր հակող անցման գրով եւ ժԲ.—ԺԳ. դարու գրչութեան տպաւորութիւն կը թողու»: Հատակոտորներս կը բովանդակեն թղ. 1ա—23ր. Եսայեայ Մեկնութեան «Յառաջասացութիւնն» կէսէն սկսեալ — ինչպէս Արշ. Արար. կ'ըսէր «փոքր ինչ պակասեալ յԱ. գլխոյ» — եւ Ա.—Բ. 1 գլխոց, այս ինքն Ա. գլխոյն եւ Բ. գլխոյն 1 համարին մեկնութիւնը: Թղ. 24էն ցվե'րջ կը պարուենակէ ԻԱ. 2—ԻԶ. 20 գլուխներու մեկնութիւնը, աւարտելով այսպէս. «Եւ արդ քանզի Աստուծոյ բանն ոչ այնպէս ինչ միայն վճարէր որպէս մարդկանն, վասն այնորիկ ասէ: Քանզի առ Բաղամաւ այսպիսի ինչ գործ գործեցաւ...»:

Այս ամէնէն կ'իմացուի թէ հատակոտորներս որոնք ի Նոր Զուլայ ձեռք բերուած են, ժամանակաւ մասն եղած են Վենետիկի ձեռագրին, անոր Վենետիկ հասնելէն յառաջ: Այսու կը լրանայ Եսայեայ Մեկնութեան միակ ծանօթ ձեռագիրը գէթ մասամբ մը. այժմ ի սպառ կորսուած կը համարուին Ձեռագրին այն մասերը, որոնք կը բովանդակէին Մեկնութեան Յառաջասացութեան Ա. մասը (ուստի սկզբէն ինկած կորսուած է իբր 1 կամ 2 թուղթ) եւ ԻԶ. 21—Լ. 5, ԿԳ. 8—ԿԶ. 24 գլուխներու Մեկնութիւնը:

3. Եսայեայ Մեկնութեան քաղմաթիւ հատակոտորներ պահուած կան ձեռագիր ծանորներու մէջ: Այս հատակոտորները շահագործած է Տիրոյեան իւր հրատարակութեան մէջ, գլխաւորաբար օգտուելով Մխիթարեան Մատենադարանի ձեռագիրներէն⁸: Կ'ամփոփեմ այստեղ ինձ ծանօթ հատակոտորները: Դժբախտաբար պիտի չկարենամ յիշատակել Երեւանի եւ Էջմիածնի ծառնաթիւններու բովանդակութիւնը, որովհետեւ չհասան ինձ մինչեւ օրս այն նիւթերը, զորոնք

⁸ Մեկնութիւն Եսայեայ, էջ 473—487: